ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

✉ 2801, ՀՀ Շիրակի մարզ, գ. Աշոցք, Հրազդանակ 1
☎ (0245) 2-14-82
E-mail: ashotsq.shirak@mtu.gov.am

14 ապրիլի 2022թ

N 296

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ
ՏԵՂԱԿԱԼ ՊԱՐՈՆ Ա. ԱՅՎԱԶՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Այվազյան

Ի պատասխան Ձեր 2022 թվականի ապրիլի 13-ի թիվ 02.1 //02703-2022 գրության՝ <<Ինֆորմացիայի ազատության կենտրոնի>> նախագահ Շուշան Դոյդոյանի տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ, հայտնում ենք,որ ՀՀ կադաստրի կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանման նախկին ղեկավար Արայիկ Առաքելյանի և նրա կին Հերմինե Ալեքսանյանի կողմից 2006թ-ի ընթացքում Շիրակի մարզի Ցողամարգ և Մուսայելյան բնակավայրերի գյուղատնտեսական նշանակության հողատարածքները էժան գներով վարձակալելու ու ավելի բարձր գումարներով բջջային կապի օպերատորներին ենթավարձակալության հանձնելու միջոցով չարաշահումներ թույլ տալու և նշված համայնքներին խոշոր չափի նյութական վնաս պատճառելու փաստերի առթիվ ՀՀ Քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունում 31-05 2021թվականին կայացվել են որոշումներ Արայիկ Առաքելյանի և Հերմինե Ալեքսանյանի նկատմամբ քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին և Աշոցքի համայնքապետարանի կողմից փաստաբան Արտակ Վոլոդյայի Մովսիսյանի միջոցով ձեռնարկվել է գործընթաց դատական կարգով Աշոցք խոշորացված համայնքին պատճառված նյութական վնասը վերականգնելու համար :
Ներկայումս խնդրո առարկա վերը նշված հեռահաղորդակցության աշտարակները գտնվում են իրենց տեղերում, քանի որ նախկին ենթավարձակալության պայմանագրերը խզվելուց հետո ձեռնարկված միջոցառումներով նախ փոփոխվել է վերը նշված հողերի նպատակային նշանակությունը և կապի օպերատորների հետ կնքվել են նոր պայմանագրեր, համաձայն որոնց համայնքային բյուջե մուտքագրվում է Ցողամարգ բնակավայրում տեղադրված բջջային կապի շարժական կայանի համար տարեկան 480.000 << դրամ գումար, իսկ Մուսայելյան բնակավայրում տեղադրված բջջային կապի շարժական կայանի համար համայնքային բյուջե գումար չի մուտքագրվում, քանի որ <<Վիվա Սելլ>> ՄՏՍ բջջային կապի օպերատորի հետ

դեռևս 2014 թվականի հոկտեմբերի 14-ից նախկին Մուսայելյան համայնքի ղեկավար Կարեն Լյովայի Վարդանյանի և Հերմինե Ժորայի Ալեքսանյանի միջև կնքված 0,27 հա հողամասի առք ու վաճառքի պայմանագրով այն դարձել է վերջինիս սեփականությունը:

Հարգանքով՝
Համայնքի ղեկավարին փոխարինող՝ Ա. Մանուկյան

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի «Գյումրու
թիվ 11 հիմնական դպրոց»
ՊՈԱԿ
✉ Արամ Խաչատրյան 27
☎ (0312) 6-42-91
E-mail gyumri11@schools.am

Rebublic of Armenia
District of Shirak
<<Gyumri's basic school N11 >> SNCO
✉ Aram Khachatryan st., 27
☎ (0312) 6-42-91
E-mail gyumri11@ schools.am

19 ապրիլի 2022թ.

N 207

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Աբրահամյան.

Ըստ Ձեր գրության, ներկայացնում ենք համապատասխան տեղեկատվություն՝ Հերմինե Ալեքսանյանի գործունեության վերաբերյալ:

Հերմինե Ալեքսանյանը 2001թվականի սեպտեմբերի 17-ից (հրաման թիվ 1199, տրված 17/09/2001թ.) ընդունվել է աշխատանքի ՀՀ Շիրակի մարզի <<Գյումրու թիվ 11 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ում որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի և աշխատում է մինչև օրս:

ՀՀ Շիրակի մարզի <<Գյումրու թիվ 11 հիմն. դպրոց>> ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար Գ. Պապիկյան